ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/111

Բողոքի ներկայացման ամսաթիվը՝ 30.11.2021թ.

Շտկված բողոքի ամսաթիվը՝ 01.12.2021թ.

Բողոք բերող անձ՝ «Պեցցո» ՍՊԸ

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/4» էլեկտրոնային աճուրդ

Գնման առարկան՝ մշակութային միջոցառումների կազմակերպման և անցկացման ծառայությունների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 23.11.2021թ.-ի թիվ 2 և 25.11.2021թ.-ի թիվ 3 արձանագրություններով կայացրած՝ «Պեցցո» ՍՊԸ-ի հայտում անհամապատասխանություն արձանագրելու, շտկում պահանջելու, հայտը անբավարար գնահատելու, մերժելու և գնման ընթացակարգը 3,7,8,11,14,16,17,19,21 և 22-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին որոշումները:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

բողոք բերող՝ *«ՊԵՑՑՈ» ՍՊԸ*
պետական գրանցման համարը՝ *92.110.1038150*
ՀՎՀՀ՝ *06955741*
հասցե՝ *ՀՀ Լոռու մարզ ք. Ստեփանավան, Նժդեհի փ. փ. 37*
տնօրեն՝ *Ավետիկ Արմենակի Գևորգյան*
Նույնականացման քարտ՝ *002852218, տրված 23.01.2014թ., 053-ի կողմից*
հասցե՝ *ՀՀ Լոռու մարզ ք. Ստեփանավան Չարենցի փող. տուն 124*

պատվիրատու՝ *Երևանի քաղաքապետարան*
հասցե՝ *ՀՀ, ք. Երևան, Արգիշտիի 1*

գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
Երևանի քաղաքապետարանի կարիքների համար մշակութային միջոցառումների կազմակերպման և անցկացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ

ԲՈՂՈՔ

1. <u>բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

1.1. Երևանի քաղաքապետարանը իր կարիքների համար Երևանի քաղաքապետարանի կարիքների համար մշակութային միջոցառումների կազմակերպման և անցկացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարել է թիվ «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Գնման ընթացակարգ).

1.2. Գնման ընթքացակարգի հրավերի 4 կետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3-ի (ներկայացված հայտարարագրի ձևին համապատասխան), սակայն վերոնշյալ հավելվածները գնման ընթացակարգի հրավերում առկա չեն:

1.3. Գնման ընթացակարգի շրջանակում մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՊԵՑՑՈ» ՍՊ ընկերությունը:

1.4. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.11.2021թ. N 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ՊԵՑՑՈ» ՍՊ ընկերության իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում լրացված են անհրաժեշտ կետերը, սակայն խախտված է հերթականությունը:

1.5. Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41 կետով, որոշել է առաջարկել «ՊԵՑՑՈ» ՍՊ ընկերությանը մեկ աշխատանքային օրում շտկել անհամապատասխանությունը:

1.6. Հանձնաժողովի 25.11.2021թ. N 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ՊԵՑՑՈ» ՍՊ ընկերությունը N 2 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունը չի շտկվել մասնակցի կողմից, իսկ հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41 կետով, որոշել է «ՊԵՑՑՈ» ՍՊ ընկերության հայտը մերժել և գնահատել անբավարար:

1.7. Հանձնաժողովը նույն նիստով որոշել է 3, 7, 8, 11, 14, 16, 17, 19, 21 և 22-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

2. ***<u>բողոքի փաստական և իրավական հիմնավորումները.</u>***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Գնման ընթացակարգի հրավերի 4 մասի 4.3 կետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3-ի (ներկայացված հայտարարագրի ձևին համապատասխան); Ընդ որում՝

- 1.2 հավելվածը ներկայացնում է այն մասնակիցը, որը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ կամ այդպիսի իրավաբանական

անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները:

-1.3 հավելվածը ներկայացնում է այն մասնակիցը, որը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ է և հայտը ներկայացնելու օրվա դրությամբ սահմանված կարգով պետք է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված լիներ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները.

- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր չի ներկայացվում, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ է:

Սույն դեպքում, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք ցանկանում հրավիրել այն հանգամանքին, որ «ՊԵՑՑՈ» ՍՊ ընկերությունը, ըստ 23.11.2021թ. N 2 արձանագրության /շահառուների վերաբերյալ հայտարարագրում լրացրել է անհրաժեշտ կետերը, սակայն խախտել է հերթականությունը/ չի նշվել այն, որ ընկերության կողմից այն կետերի հաջորդականությունը, որոնք խախտվել են, դրանք այն կետերն են, որոնք ընկերությունը ըստ հայտարարագրման չպետք է լրացնի: Այսինքն ընկերությունը չի լրացրել այն կետերը, որոնք այնուամենայնիվ ենթակա չէին լրացման իր կողմից: Փաստացի, «ՊԵՑՑՈ» ՍՊ ընկերությունը հայտարարագրում լրացրել է անհրաժեշտ բոլոր այն կետերը, ինչն անհրաժեշտ էր հայտը բավարար գնահատելու համար, այլ ոչ թե անհամապատասխանություն արձանագրելու և շտկում պահանջելու համար: Իսկ եթե Պատվիրատուն գտնում էր, որ անհրաժեշտ է պարզել, արդյոք ընկերության կողմից ճիշտ է հայտարարագրում լրացվել տեղեկատվությունը, և ջնջված կետերում առկա տեղեկատվությունը նույնպես ենթակա էր լրացման, ինչը չի արվել ընկերության կողմից, ապա կարող էր գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով պատճառաբանված որոշման դեպքում՝ հարցում կատարել համապատասխան իրավասու մարմնին և պարզել հայտարարագրում լրացված տեղեկատվության իսկությունը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը «ՊԵՑՑՈ» ՍՊ ընկերության հայտում արձանագրելով անհամապատասխանություն և այդ անհամապատասխանությունը չշտկելու պատճառով՝ ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին համապատասխան որոշումներ կայացնելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 3-րդ հոդվածով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և Հրավերի 4.3 կետով սահմանված պահանջները: Բացի այդ, գնահատող հանձնաժողովը իրականացնելով իր գործառույթները չպետք է ձևական

պահանջներով ծանրաբեռնի մասնակիցներին, ինչի հետևանքով կարող է առաջանալ նման հետևանք՝ այն է աճուրդը հայտարարվում է չկայացած՝ չապահովելով Պատվիրատուի այն կարիքները, ինչի համար հայտարարվում է աճուրդը:

3. <u>Բողոքի պահանջը</u>.

Առաջնորդվելով վերոգրյալով և ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածներով.

Խնդրում եմ

Պարտավորեցնել «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 23.11.2021թ. N 2 և 25.11.2021թ. N 3 արձանագրություններով կայացված՝ «ՊԵՑՑՈ» ՍՊ ընկերության հայտում անհամապատասխանություն արձանագրելու, շտկում պահանջելու, հայտը անբավարար գնահատելու, մերժելու և գնման ընթացակարգը 3, 7, 8, 11, 14, 16, 17, 19, 21 և 22-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին որոշումները:

Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը.

- *«ՊԵՑՑՈ» ՍՊ ընկերության՝ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից տրված պետական ռեգիստրի վկայականի պատճենը.*
- *«ՊԵՑՑՈ» ՍՊ ընկերության տնօրենի անձնագրի պատճենը.*
- *պետական տուրքի անդորրագիրը.*
- *«ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին 23.11.2021թ. N 2 և 25.11.2021թ. N 3 արձանագրությունների պատճենները:*

30.11.2021թ.

Հարգանքով՝

«ՊԵՑՑՈ»

ՍՊԸ տնօրեն _____ Ա. Գևորգյան

Digitally signed by GEVORGYAN AVETIK
3701800081
Date: 2021.11.30 11:51:18 AMT